

Իրմէ ետեւ այս հրատարակութիւնը լոյս տեսած է 1772ին Վենետիկ, իբրեւ Բ. տպագրութիւն, եւ 1796 իբրեւ Գ. տպագրութիւն, երկուքն ալ «օժանդակութեամբ եւ ծախիւք յուժեմնէ բանասիրէ» (Գ. ն՝ «ուժեմն բանասիրի») :

Սոյն 1752ի տպագրութեան ճակատն ու բովանդակութիւնը յառաջ կը բերենք

«Գրգուկ որ կոչի Էֆիմէրտէ. Յորում պարունակի Նախ՝ Շըջան մշտնջենաւոր զեկուցմանց : Երկրորդ՝ Ընձեռուածք տարբերական որակութեանց : Երրորդ՝ Հաւաքմունք նշանաւոր բանից իմաստասիրաց : Չորրորդ՝ Տղայական հանձարեղութիւնք, եւ խաղք : Տպագրեցեալ աշխատասիրութեամբ Սարգսի Աբբեպ. ի Կ. Պոլսեցւոյ, ի յօգուտ եւ ի զուարճութիւն Գեռափթիթ մանկանց ուսումնասիրաց մերային Ազգի : Օժանդակութեամբ, եւ խնդրանօք Մահտեսի Յակօբի որդի, Շքեղապանձ Թովմաս չէլէպոյն Սեղբոսեան (որ եւ Տախաներէն կոչի) Թօմազօ տի Սէռփօս : Ի Հայրապետութեան Հայոց ի Լուսանկարն սուրբ Էջմիածին. Տեառն Մինասայ Կաթողիկոսի Ակնեցւոյ : Յամի կենարարին մերոյ 1752, ի Մարտի 3 : Ի Վէնէտիկ, ի տպ. Անտօնի Պօռթօլի :» (Մատ. էջ 199, ուր կայ այլ ճակատ, եւ ծանօթութիւն անճիշդ.)

Մեծութիւն 10.5 × 5.5, էջք I—XXII եւ 1—456, 6 պատկերք եւ 2 տախտակք :

Էջ 456. «Շնորհիւ եւ ողորմութեամբ Տեառն եղբրեցաւ տպագրումն սոյն փոքրագիր գրգկանս (որ է իբր զբօնարան իմն ուսումնաջան մանկանց) ի բարեվայել քաղաքն Վէնէտիկ, ի խնդրոյ այնորիկ պերճափառի, որոյ անունն ի յառաջին ճակատի սորին մակագրեցաւ : Ուստի խնդրեմ ի վայելղացդ յիշատակել յաղօթս ձեր, զծնօղս նորին, եւ մեր՝ միով Հայր մերիւ ի Տէր :»

15, 16. «Աշգբառն-Բիւն Գունին Յաբէ-Բիւն : Յօրինեալ ի Մովսիսէ խորենացւոյ Յեռա-